ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Ծաղկաձորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար Կ.Անդրեասի փողոցի և մայթի վերանորոգման աշխատանքների (իրականացված հենապատի և փողոցի ավելացում, լրացում) ձեռքբերման նպատակով կազմակերպված ԾՔ-ԳՀԱՇՁԲ-17/8 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի սեպտեմբերի 22-ին կնքված N ԾՔ-ԳՀԱՇՁԲ-17/8 պայմանագրում 2017 թվականի նոյեմբերի 01-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ – Անհրաժեշտություն է առաջացել կատարել լրացուցիչ աշխատանքներ, որի համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն – Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին պայմանագրի գինը սահմանել 21.934.550 /քսանմեկ միլիոն ինը հարյուր երեսունչորս հազար հինգ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ՝ ավելացնելով 1.934.550 /մեկ միլիոն ինը հարյուր երեսունչորս հազար հինգ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ՝ համաձայն համադրման ակտի: Պայմանագրի կատարման վերջնաժամկետը սահմանել՝ 15 նոյեմբերի 2017թ:

Փոփոխության հիմնավորում - ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 56-րդ կետի 2-րդ ենթակետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Արփինե Ավետիսյանին:

Հեռախոս՝ 0223-6-04-02:

Էլ. փոստ՝meria@tsakhkadzor.am

Պատվիրատու՝ Ծաղկաձորի քաղաքապետարան

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 1

22 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017Թ.ԿՆՔԱԾ N << ԾՔ-ԳՀԱՇՁԲ-17/8>> ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ք. Ծաղկաձոր «01» նոյեմբեր 2017թ

Ծաղկաձորի համայնքապետարանը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս համայնքի ղեկավար Ա. Հարությունյանի , որը գործում է համայնքի կանոնադրության հիման վրա, մի կողմից , և <<Բագրատունի>> ԱԿ-ն, ի դեմս Ընկերության նախագահ Վ.Ավետիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1. Քանի որ մայթի և ճանապարհի կառուցման ընթացքում անհրաժեշտություն է առաջացել կատարել լրացուցիչ աշխատանքներ, այդ պատճառով 22.09.2017թ. N ԾՔ-ԳՀԱՇՁԲ-17/8 գնման պայմանագրում անհրաժեշտ է կատարել փոփոխություններ:

2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները

2.1 Պայմանագրի գինը սահմանել 21.934.550 /քսանմեկ միլիոն ինը հարյուր երեսունչորս հազար հինգ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ՝ ավելացնելով 1.934.550 /մեկ միլիոն ինը հարյուր երեսունչորս հազար հինգ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ՝ համաձայն համադրման ակտի:

2.2 Պայմանագրի կատարման վերջնաժամկետը սահմանել՝ 15 նոյեմբերի 2017թ:

3. Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով , 2 օրինակից , որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Պատվիրատու	Կապալառու
Ծաղկաձորի համայնքապետարան ք. Ծաղկաձոր, Օրբելի եղբ. 9	«Բագրատունի» ԱԿ Գեղարքունիքի մարզ,գ.Դդմաշեն
հ/հ 900122002240	հ/հ 11500293690000
Կ/Գ գործ. Վարչություն	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ <<Սևան>> մ/ճ
Հվհհ 03001885	Հվհհ 08605492
Համայնքի ղեկավար Ա. Հարությունյան	Նախագահ Վ.Ավետիսյան
ստորագրություն	ստորագրություն
Կ.Տ.	Կ.Տ.